



(Խորանագարդ Օչին Թագաւորի ձեռագիր ժամագրքին՝ 1319)

ԱՐՁԱՆԱԿԻՐ ԱԶԻՋԻՅԷԻ ՏԱՊԱՆԱՔԱՐԵՐՈՒ

Գերեզմանատանս հնագոյն տապանաքարերը կը գտնուին հարաւային եզերքին վրայ, արեւելք-արեւմուտք ուղղութեամբ, վասն զի 1575 ին գերեզմանատան համար կայսերական Ֆերմաններով եւ տեղական հեօնէքներով յատկացուած այս արտին վրայ քաղաքին ուղղակի մօտը եղող բաժնին մէջ կատարուած են առաջին թաղումները եւ Հայոց թիւին հետզհետէ անելովը, գերեզմանատունն ալ համեմատաբար ընդարձակուած է դէպի հիւսիս: Յայտնի է որ ծայրագոյն մասն ալ հին եղած է, քանի որ 1680ական թուականներու յատուկ տապանաքարեր գտնուած են այդ մասին մէջ ալ:

1570 ական թուականներուն Հալէպի Հայերը ընդհանրապէս «Արեւելքցի» ներ եղած են, առ հասարակ «Ջողցի»ներ կամ «Ջուղայեցի»ներ, որոնք ամփոփուած են գրեթէ իրարու կից, կազմելով առանձին թաղամաս մը: